# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/52**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մոսէսքո» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 21.07.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից 16.07.2021թ. ներկայացված (19.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>«Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Մոսէսքո» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.07.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Մոսէսքո» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. մայիսի 24-ը:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական-բնութագրի համաձայն՝ 1-ին չափաբաժնի համար սահմանվել են հետևյալ պարամետրերը.

USO 84035624-081-2012 Միջազգ.ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք

- կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ,
- մածուցիկության ինդեքսը՝ 125-ից ոչ պակաս,
- բռնկման ջերմաստիճանը բացտիգլում՝ 215$^0$C –ից ոչ ցածր,
- սառեցմանջերմաստիճանը՝ -30$^0$C –ից ոչ բարձր,
- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը՝ 0.015%-ից ոչ ավել,
- հիմնային թիվ ոչ պակաս 6.5 մգ KOH/գ,
- սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%,
- խտությունը ոչ ավել՝ 910 կգ/մ$^3$,
- ջրի պարունակությունը՝ հետքեր,

Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի:

Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 3 արձանագրության 3.3 կետով արձանագրվել է հետևյալը. ««Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերում նշված ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք /ՏՊ/, սակայն չի ներկայացվել նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը:»:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մոսէսքո» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Այնուհետև, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի. ««Մոսէսքո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ՏՊ-ի կրկնօրինակը: «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի և Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև կան անհամապատասխանություններ: Հավելված 1.1-ով ներկայացվել է

«-կինեմատիկ մածուցիկությունը 100C$^0$դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ», «-սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%», սակայն ՏՊ-ի կրկնօրինակով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 100C$^0$ դեպքում՝ 14.5-16,0մմ$^2$/վ», «-սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,8%»: Բացի այդ ՏՊ-ի կրկնօրինակով չի ներկայացվել «- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ$^3$» դրույթը:

Արդյունքում ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել»:

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, *ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն Ընթացակարգի ոչ թափանցիկ, ոչ հրապարակային լինելու հետևանքով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, ինչ էլ վերջինիս կանգնեցրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկվելու վտանգի առջև:

Մասնավորապես՝ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր

ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

1. Նախ, ուսումնասիրվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն հայտերի բացման ժամկետ է սահմանվել՝ 2021թ. մայիսի 24-ին, մինչդեռ հայտերի բացման նիստը կայացել է 2021թ. մայիսի 27-ին, որը հանդիսանում է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կոպիտ խախտում:

Վերը նշվածով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այն է՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջները:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այն է՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասերիպահանջները, որոնքհանգեցրելենՕրենքի3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպման սկզբունքի խախտմանը, և «Մոսէսքո» ՍՊԸ-ին զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Նման ոչ իրավաչափ գործողություններիև գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների պայմաններում, գտնում ենք, որ Կարգի 41-րդ կետով «Մոսէսքո» ՍՊԸ-ին ներկայացված շտկման պահանջը եղել է ոչ իրավաչափ, քանի որ այն զուգորդվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 8-րդ մասի, 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների կոպիտ խախտմամբ:

2. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք. «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել են հրավերով սահմանված բոլոր տեխնիկական բնութագրի պահանջները: Այսինքն «Մոսէսքո» ՍՊԸ-ն պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված ապրանք: Փաստորեն, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ի և ՏՊ-ի կրկնօրինակում առկա տեխնիկական պարամատրերի միջև:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ արտադրող ООО СоюзАвиаХим ընկերությունը «Մոսէսքո» ՍՊԸ-ի պատվերով պարտավորվել էր արտադրել այն ապրանքը այն

տեխնիկական պարամետրերով, որոնք նախատեսված էին Ընթացակարգի հրավերով: Մասնավորապես, 27.05.2021թ. թիվ 27/0521-01 գրությամբ /կցվում է/ ООО СоюзАвиаХим ընկերությունը հավաստել է, որ մատակարարելու է «ՀՀՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի համար նախատեսված ապրանքը: Եվ ըստ էության, հրավերով սահմանված տեխնիկական-բնութագրին չհամապատասխանող ապրանքի մատակարարումը հնարավոր կլիներ պարզել բացառապես պայմանագրի կատարման փուլում, քանի որ ինչպես նշել ենք, «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներկայացված Հավելված 1.1-ով պարտավորվել էր 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել հրավերով սահմանված բոլոր տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանք:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը իրավաչափ չէ և չի բխում Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթեբողոքըներկայացրածանձըբողոքարկումէ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունիպատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնելու 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Դադարեցնելու «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը անբարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 23.07.2021թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 ծածկագրով բողոքը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով 12.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերում նշված ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք /ՏՊ/, սակայն չի ներկայացվել նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի llcmosesco@gmaoil.com էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

Հանձնաժողովի 01.07.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է ՏՊ-ի կրկնօրինակը: «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի և Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև կա անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.1-ով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 1000C դեպքում՝ 15.3-16,3մմ2/վ», «-սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%», սակայն ՏՊ-ի կրկնօրինակով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 1000C դեպքում՝ 14.5-16,0մմ2/վ», «-սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,8%»: Բացի այդ, ՏՊ-ի կրկնօրինակով չի ներկայացվել «-խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ3» դրույթը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 01.06.2021թ.-ին որոշել է 1-ին չափաբաժնի մասով վերջինիս հայտը մերժել:

«Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО “СоюзАвиаХим” ընկերության 27.05.2021թ.-ի թիվ 27/0521-01 գրությունը, որով վերջինս հայտնել է հետևյալը. «В ответ на ваш запрос сообщаем следующее, что согласно ТУ 19.20.29-001-13488701-2018 масло моторное всесезонное универсальное марки 15W-40 SL/CI-4 будет соответствовать параметрам, указанным министерством обороны Армении:

СТО 84035624-081-2012 Международный стенд. SAE-15W40 API-SL/CI-4 или аналогичный, кинематическая вязкость при 100 С: 15.3-16,3 мм2/с, индекс вязкости не менее 125, температура воспламемения в открытом поддоне не ниже 215С, температура охлаждения не выше -30С, массовая доля механических смесей-не более 0,015%, щелочное число не менее 6,5 мг КОН/г, сульфатная зола не более 1,5%, плотность не более 910 кг/м3, содержание воды-следы. Маркировка и упаковка по ГОСТ 1510-84.220 литровых емкостей от производителя»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել սույն բողոքի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստի վրա.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում՝ Կարգի 41-րդ կետի խախտման փաստով, բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի վարույթում նախաձեռնվել էր թիվ ՍՑ-ԼՕ-2021/159 ծածկագրով ընթացակարգ, որի վերաբերյալ 09.07.2021թ. կայացված որոշմամբ /կցվում է/՝ բողոքներ քննող անձը «Մոսէսքո» ՍՊԸ-ի ն չի վերագրել Կարգի 41-րդ կետի խախտում և ՍՑ-ԼՕ-2021/159 ծածկագրով ընթացակարգը մերժել է:

Թիվ ՍՑ-ԼՕ-2021/159 որոշմամբ (կցվում է) բողոքներ քննող անձը գտել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Հայտը մերժելու հիմքը առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին

տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը՝ չի կարող վրա հասնել նաև մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Լ.Օհանյանը հանգել է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել մասնակցի հայտը մերժելուն, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձը գտել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ի թույլ չի տվել Կարգի 41-րդ կետի խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը գործել է ոչ իրավաչափ և խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից ևս մեկ անգամ խնդրում ենք «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից 16.07.2021թ.ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

**2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.07.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3719-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 19.07.2021թ. N /ԲՔԱ-ԳՆ/11559-2021 գրության՝ «Մոսէսքո» ՍՊ ընկերության կողմից 16.07.2021թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը իր կարիքների համար շարժիչի յուղերի և հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի մասին հայտարարությունը և հրավերը 12.04.2021թ.-ին հրապարակվել են տեղեկագրում՝ www.procurement.am ինտերնետային կայքում, ինչպես նաև էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում:

Ընթացակարգի հրավերի 1-ին բաժնի՝ 4.2 կետով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 24-ը, ժամը 11:00-ն, իսկ 8.1 կետով սահմանվել է, որ հայտերի բացումը կկատարվի Armeps համակարգի միջոցով՝ նշված օրը և ժամին:

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Վերջինիս կողմից ներկայացված հայտի N 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի (Շարժիչի յուղեր /15W40/) տեխնիկական բնութագրում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.05.2021թ.-ին որոշել է կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամա-պատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթուղթը, որը քննարկվել է գնահատող հանձնաժողովի կողմից: Մասնակցի հայտը (Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով) 01.06.2021թ.-ին գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանվել է, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված

տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ 43-րդ կետի 1-ին կետով նախատեսված է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Ընթացակարգը հայտարարվել է չկայացած 09.06.2021թ.-ին և չկայացման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում:

Ինչ վերաբերվում է «Մոսէսքո» ՍՊ ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգի ոչ թափանցիկ, ոչ հրապարակային լինելու հետևանքով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, ապա հայտնում եմ, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը, այսինքն՝ անհիմն է գնահատող հանձնաժողովին մեղադրել վերը նշվածում:

Միաժամանակ հայտնում եմ, որ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության հրապարակումները՝ ժամկետների առումով, կիրառվում են նաև բոլոր ընթացակարգերում և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նմանատիպ բողոքի դեպքում երբեք որպես խախտում չեն արձանագրվել:

«Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի և Հավելված N 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև կա անհամապատասխանություններ, որն էլ հիմք է հանդիսացել հայտի մերժմանը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներից, ուստի գտնում եմ, որ Մասնակցի՝ վերոնշյալ բողոքով հայտնած առարկությունները անհիմն են, իսկ ներկայացրած բողոքը ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ

փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոսէքսքո» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, 1-ին չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալը.

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական հատկանիշը |
|---|---|---|
| 1 | Շարժիչի յուղեր /15W40/ | USO 84035624-081-2012 Միջազգ.ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ,<br>- մածուցիկության ինդեքսը՝ 125-ից ոչ պակաս,<br>- բռնկման ջերմաստիճանը բաց տիգլում՝ 215$^0$C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -30$^0$C -ից ոչ բարձր,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ 0.015%-ից ոչ ավել,<br>- հիմնային թիվ ոչ պակաս 6.5 մգ KOH/գ,<br>- սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%,<br>- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ$^3$,<br>- ջրի պարունակությունը՝ հետքեր,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |
| Ծանոթություն<br>1. Եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳOUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը:<br>(...) | | |

3. Ընթացակարգի շրջանակներում «Մոսէքսքո» ՍՊԸ-ն մասնակցության հայտի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի նկարագիրը.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրերը |
| *1* | *Շարժիչի յուղեր /15W40/* | ՏՊ 19.20.29-001-13488701-2018 Միջազգ.ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ,<br>*- մածուցիկության ինդեքսը՝ 125-ից ոչ պակաս,*<br>*- բռնկման ջերմաստիճանը բաց տիգլում՝ 215$^0$C -ից ոչ ցածր,*<br>*- սառեցման ջերմաստիճանը՝ -30$^0$C -ից ոչ բարձր,*<br>*- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ 0.015%-ից ոչ ավել,*<br>*- հիմնային թիվ ոչ պակաս 6.5 մգ KOH/գ,*<br>*- սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%,*<br>*- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ$^3$,*<br>*- ջրի պարունակությունը՝ հետքեր,*<br>*Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով* |

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերում նշված ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք /ՏՊ/, սակայն չի ներկայացվել նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ՏՊ-ի կրկնօրինակը: «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի և Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև առկա են անհամապատասխանություններ: Հավելված 1.1-ով ներկայացվել է «- կինեմատիկ մածուցիկությունը $100^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ», «սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%», սակայն ՏՊ-ի կրկնօրինակով ներկայացվել է «- կինեմատիկ մածուցիկությունը $100^0$C դեպքում՝ 14,5-16,0մմ$^2$/վ», «սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,8%»: Բացի այդ ՏՊ-ի կրկնօրինակով չի ներկայացվել «- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ3» դրույթը:

7. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, մերժելու վերաբերյալ:

**<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մոսէսքո» ՍՊԸ-ի՝ 16.07.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած

մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, 1-ին չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալը.

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական հատկանիշը |
|---|---|---|
| | Շարժիչի յուղեր /15W40/ | USO 84035624-081-2012 Միջազգ.ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ,<br>- մածուցիկության ինդեքսը՝ 125-ից ոչ պակաս,<br>- բռնկման ջերմաստիճանը բաց տիգլում՝ 215$^0$C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -30$^0$C -ից ոչ բարձր,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ 0.015%-ից ոչ ավել,<br>- հիմնային թիվ ոչ պակաս 6.5 մգ KOH/գ,<br>- սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%,<br>- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ$^3$,<br>- ջրի պարունակությունը՝ հետքեր,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |
| Ծանոթություն<br>***2. <u>Եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳOUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը:</u>***<br>***(...)*** | | |

Ընթացակարգի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ն մասնակցության հայտի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի նկարագիրը.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրերը |
| 1 | Շարժիչի յուղեր /15W40/ | ՏՊ 19.20.29-001-13488701-2018 Միջազգ.ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4<br>- կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ,<br>- մածուցիկության ինդեքսը՝ 125-ից ոչ պակաս,<br>- բռնկման ջերմաստիճանը բաց տիգլում՝ 215$^0$C -ից ոչ ցածր,<br>- սառեցման ջերմաստիճանը՝ -30$^0$C -ից ոչ բարձր,<br>- մեխանիկական խառնուրդների զանգվածային բաժինը ՝ 0.015%-ից ոչ ավել,<br>- հիմնային թիվ ոչ պակաս 6.5 մգ KOH/գ,<br>- սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%,<br>- խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ$^3$,<br>- ջրի պարունակությունը՝ հետքեր,<br>Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի:<br>Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ***<u>Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերում նշված ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք /ՏՊ/, սակայն չի ներկայացվել նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ***«Մոսէսքո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ՏՊ-ի կրկնօրինակը: <u>«Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի և Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև առկա են անհամապատասխանություններ: Հավելված 1.1-ով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 15.3-16,3մմ$^2$/վ», «սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,5%», սակայն ՏՊ-ի կրկնօրինակով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 100$^0$C դեպքում՝ 14,5-16,0մմ$^2$/վ», «սուլֆատային մոխրայնություն ոչ ավել՝ 1,8%»: Բացի այդ ՏՊ-ի կրկնօրինակով չի ներկայացվել «-խտությունը ոչ ավել՝ 910կգ/մ3» դրույթը:</u>***

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, <u>հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ Կարգի 42-րդ կետը՝ որ անհամապատասխանությունը չշտկելու դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, ՍՏՕ և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, սակայն «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է հրավերում նշված ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք /ՏՊ/, սակայն չի ներկայացվել նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը, ***<u>Ընկերությունն</u>*** անհամապատասխանության վերաբերյալ ծանուցվելուց հետո սահմանված ժամկետում ***<u>ներկայացրել է ՏՊ-ի կրկնօրինակը, որը Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ի հետ համադրելու արդյունքում 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի պարամետրերի միջև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ և որոշում է կայացվել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, մերժելու վերաբերյալ, այսինքն՝ հարկ եմ համարում արձանագրել, որ անհամապատասխանություններն արձանագրվել են Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ը իր իսկ կողմից ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակի հետ համադրելու արդյունքում, որպիսի***

***<u>պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից:</u>***

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով վկայակոչված այն փաստական հանգամանքին, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում՝ Կարգի 41-րդ կետի խախտման փաստով, բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի վարույթում նախաձեռնվել էր թիվ ՍՑ-ԼՕ-2021/159 ծածկագրով ընթացակարգ, որի վերաբերյալ 09.07.2021թ. կայացված որոշմամբ /կցվում է/՝ բողոքներ քննող անձը «Մոսէսքո» ՍՊԸ-ի ն չի վերագրել Կարգի 41-րդ կետի խախտում և ՍՑ-ԼՕ-2021/159 ծածկագրով ընթացակարգը մերժել է, հարկ եմ համարում արձանագրել, որ թեև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 15.06.2021թ. թիվ 26/26-1/9651-2021 ընթացակարգը մերժվել է, այդուհանդերձ վերջինս որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ **<u>Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը</u>** չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, այսինքն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է տվյալ ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունների անպատշաճ կատարման փաստը:

Ինչպես նաև անդրադառնալով բողոքաբերի կողմից վկայակոչված այն փաստական հանգամանքին, որ արտադրող ООО СоюзАвиаХим ընկերությունը «Մոսէսքո» ՍՊԸ-ի պատվերով պարտավորվել էր արտադրել այն ապրանքը այն տեխնիկական պարամետրերով, որոնք նախատեսված էին Ընթացակարգի հրավերով: Մասնավորապես, 27.05.2021թ. թիվ 27/0521-01 գրությամբ /կցվում է/ ООО СоюзАвиаХим ընկերությունը հավաստել է, որ մատակարարելու է «ՀՀՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի համար նախատեսված ապրանքը: Եվ ըստ էության, հրավերով սահմանված տեխնիկական-բնութագրին չհամապատասխանող ապրանքի մատակարարումը հնարավոր կլիներ պարզել

բացառապես պայմանագրի կատարման փուլում, քանի որ ինչպես նշել ենք, «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներկայացված Հավելված 1.1-ով պարտավորվել էր 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել հրավերով սահմանված բոլոր տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանք, հարկ եմ համարում հայտնել, որ Ընթացակարգի հրավերով սահմանված դրույթը՝ ՏՊ կրկնօրինակը ներկայացնելու վերաբերյալ ինքնանպատակ չէ, քանի որ նշված փաստաթուղթը նույնպես հաշվի է առնվում Ընկերության հայտը գնահատելիս և այն չի կարող կրել ձևական բնույթ:

Այսպիսով՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից 16.07.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**